

ՍՓՅՈՒՌՔՈՒՄ

ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՀԱՅՈՑ ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆՆԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

1966-ի ապրիլի 27—28 օրերին Թենեֆլայ քաղաքի Ս. Թովմաս եկեղեցում տեղի ունեցավ Հյուսիսային Ամերիկայի Արևելյան թեմի հոգևորականների տարեկան համագումարը, նախագահությամբ՝ առաջնորդ գեր. Տ. Սիոն արք. Մանուկյանի։ Համագումարի ատենապետ էր ընտրվել հոգշ. Տ. Եղիշե ծ. վրդ. Կիզիրյանը և ատենադպիր արժ. Տ. Բարկեն ա. քհն. Մագուտյանը։

Համագումարին ներկա էին շուրջ 40 եկեղեցականներ։

«Հայր մեր»-ից և «Իմաստութիւն հօր Յիսուս» աղոթքից հետո առաջնորդ սրբազանը ժողովը բացեց ողջույնի ջերմ խոսքերով։

Ապա ժողովի ատենապետը կարդաց Ամենայն Հայոց Հայրապետի, ապրիլ 15 թվակիր, հետևյալ ողջույնի և օրհնության գիրը՝ ուղղված համագումարին, որն ունկնդրվեց հոտնկայս.

«Այսօր, երբ մեր եկեղեցին կգտնվի Քրիստոսի Սուրբ Հարության շնորհներուն ներքև, Մենք՝ Ձեր Հայրապետը, Սուրբ Էջմիածնեն Աստուծո օրհնությունը կբերենք Ձեր թեմի եկեղեցիներուն և ի մասնավորի Ձեզի՝ քրիստոսասեր սպասավորներ, որ ի մի հավաքված եք Ձեր բարեջան սրբազան առաջնորդի շուրջ, միասին աղոթելու և միասին մտածելու ապագա Ձեր աշխատանքներու մասին, հառավել շինություն Ձեր և Ձեր ժողովուրդի հոգևոր կյանքին։

Թող Աստված հաստատ և միշտ շեն պահե Ձեր թեմը իր համայնքներով, և միշտ ամբողջ ու անխոով պահպանե Ձեր Հոգևոր Եղբայրությունը ի փառս Հայաստանյայց Ս. Եկեղեցվո՝ աստվածասեր Ձեր մեծ երկրին՝ Միացյալ Նահանգաց մեջ։

Ձեզի բոլորիդ, սիրելիներ և հարազատներ Մեր, լիառատ օրհնություն երկնային և անսպառ բարի եռանդ՝ Ձեր նվիրական առաքելության լուսափայլ ճամբուն վրա։

«Քանզի ո՞վ է մեր յոյս՝ կամ խնդութիւն կամ պսակ պարծանաց մերոց, եթէ ոչ դուք ի Տէր՝ առաջի Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ի Նորա գալստեան։ Զի դուք էք փառք մեր և խնդութիւն»։ (Ա. Թես. 19—20)։

Հայրապետական կոնդակի ընթերցումից հետո համագումարը որդիական սիրո և երախտագիտության հետևյալ հեռագիրը հղեց առաջնորդ գեր. Տ. Սիոն արք.-ի ստորագրությամբ Վեհափառ Հայրապետին։

Վեհափառ Տե՛ր,

«Մեր թեմի հոգևորականաց տարեկան համագումարը ակնածանքով ունկնդրեց Ձեր Սրբության ողջույնի և Հայրապետական օրհնության գիրը, որով բարեհաճած էիք օրհնել մեր համագումարը։ Ամերիկահայ թեմի մեր հոգևոր պաշտոնակիցները այսու մեղի հետ կուգան Ձեր Սրբության մատուցանելու իրենց որդիական հարգալից սիրո արտահայտությունը և Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հավա-

տարմության ուխտը՝ միասին աշխատելու Ամերիկահայ թեմի և Աստուծո փառքին համար»։

Այնուհետև Համագումարը իր հաջորդական երեք նիստերի ընթացքում անցավ օրակարգի հետևյալ հարցերի քննարկմանը։

ա. Տոնացույցը նոր սերնդին մատչելի դարձնելու հարց (զեկուցողներ արժ. Տ. Առնակ քհն. Գասպարյան և արժ. Տ. Տաճատ քհն. Դավթյան)։

բ. Հոգևորականության կենցաղագիտության հարց (զեկուցող՝ արժ. Տ. Արտեն քհն. Աշճյան)։

գ. Քարոզի բովանդակությունն ու պատրաստությունը, արվեստն ու տեխնիկան (դասախոսություններ՝ արժ. Տ. Տաճատ քհն. Դավթյան և հոգ. Տ. Գարեգին ծ. վրդ. Գազանճյան)։

Օրակարգի հարցերի ու դասախոսությունների շուրջ տեղի ունեցան համագումարի պատգամավորների միջև մտքերի աշխույժ և հետաքրքիր փոխանակություններ։

Օրակարգից դուրս քննության առնվեցին նաև քույր եկեղեցիների հետ հայ հավատացյալների հարաբերության, քահանաների կյանքի ապահովագրության և թեմական կանոնադրության մեջ բարեփոխություններ մտցնելու հարցերն ու առաջարկները։

Հյուսիսային Ամերիկայի Հայոց առաջնորդական վիճակի հոգևորականների տարեկան համագումարը իր աշխատանքներն ավարտեց հինգշաբթի օր, ապրիլի 28-ին երեկոյան ժամը 6-ին, խմբովին երգված տերունական աղոթքով և Առաջնորդ Սրբազանի «պահպանիչով»։